

«Պատրաստ ենք համագործակցելու».

**Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը ճեպագրույց ունեցավ
մարզային լրագրողների հետ**

Այսօր Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը տարեվերջյան ճեպագրույց ունեցավ մարզի լրատվամիջոցների հետ՝ պատասխանելով նրանց մի քանի հարցերի՝ կապված հիմնականում վերջին ամիսների ձեռքբերումների և 2019թ. անելիքների հետ:

-Շատ եմ կարևորում ձեր աշխատանքը հատկապես երկրում տեղի ունեցած շրջադարձային փոփոխությունների առումով: Ուզում եմ շնորհակալություն հայտնել 2018թ. մեր համագործակցության համար և վստահ լինել, որ է՛լ ավելի արդյունավետ կաշխատենք 2019թ.-ին: Մաղթում եմ, որ գալիք տարում միայն լավ իրադարձություններ առիթ ունենաք լուսաբանելու: Պատրաստ ենք համագործակցելու և աշխատելու ազատ ու թափանցիկ: Ակնկալում եմ միայն օբյեկտիվ լուսաբանում: Վստահ եղեք, որ անգամ ամենացավոտ հրապարակումը, եթե այն օբյեկտիվ է, ապա ընդունելի է,- ասաց Ա. Ղուկասյանը:

Նա, ի պատասխան լրագրողների հարցի, նշեց, որ իր պաշտոնավարման ընթացքում գլխավոր ձեռքբերումը համարում է այն, որ մարզպետարանն իր աշխատանքում ձգտել է առավելագույն թափանցիկության, բացառվել են բոլոր տիպի կոռուպցիոն դրսևորումները: Մարզպետը նաև նշեց, որ ներդրումների առումով մի շարք պայմանավորվածություններ են ձեռք բերվել, որոնք միս ու արյուն կստանան արդեն 2019թ.-ին: Լրագրողների հարցին պատասխանելով՝ մարզպետը նաև նշեց, որ 2019թ. մարզպետարանում կառուցվածքային, հետևաբար նաև՝ կադրային փոփոխություններ են սպասվում:

Հանդիպման ավարտին Ա. Ղուկասյանը հյուրասիրության սեղանի շուրջ շնորհավորեց մարզի լրատվամիջոցներին գալիք տոների կապակցությամբ և փոքրիկ հուշանվերներ հանձնեց: